խմիչքների մասին Քեզ ճշգրիտ գաղափար տալու համար, կանչեցի ինձ մօտ մի քանի գիւղացի կանանց և ահա նրանց տուած տեղեկութիւնները գրի եմ առնում։ Ինչպէս անցեալ նամակներումս, այնպէս էլ այս նամակովս ես Քեզ կը նկարագրեմ առանձին-առանձին վերնագրերով։

* * *

ԲՆԱԿԱՐԱՆ

Փէրիայում համարեա բոլոր գիւղերը թէ արտաքուստ և թէ ներքուստ նման են միմեանց. նրանք փոքր են և քառակուսի գծուածի նման, ուր չկան կանոնաւոր և լայն փողոցներ. փողոց կոչուող ծուռ-մուռ ուղիներն անհարթ են և կեղտոտ. շատ տեղեր լցուած են անասունների աղբակոյտերով, որ ամբողջ գարնան և ամառուան փռում են չորացնելու համար, որպէսզի այրելու աթար պատրաստեն։ Այդ բոլորը մի առանձին տխուր տպաւորութիւն են թողնում մարդու վրայ։

Տները։ Ահա այսպիսի փողոցներում, հողի մակերևոյթի վրայ փռուած են անտաշ քարերից ու ցեխից շինած հողածածկ, գիւղական խրճիթները. նրանք շատ անշուք են, պարզ և նահապետական։ Համարեա բոլոր գիւղերում, քիչ բացառութեամբ մի հարկանի են 3—4 արշին բարձր հողէ պատերով շրջապատուած և շինուած են իրար կողքի, խառնիխուռն, այնպէս որ գիւղացիների մասնաւոր երթևեկութիւնը կատարւում է շատ անգամ տների կտուրների վրայով, մանաւանդ ձմեռ ժամանակ, երբ փողոցների ձիւնը հաւասար է կտուրներին։

Ընդհանրապէս տներն արտաքուստ մերկ են զարդարանքներից, դռները ցածր, իսկ առջևից ունենում են սրահներ։ Տները շինում են իրենք տանուտէրերը, երբեմն մի երկու վարպետ վարձելով։

Ներս եմ մտնում։ Տունը բաղկացած է երկու բաժանմունքից. մի կողմում սենեակներն են, իսկ միւս կողմում